«ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ

Արագածոտն մարզ,գյուղ Ծաղկահովիտ

Էլ.փոստ tsakhkahoviti_bk@mail.ru
+374-257-206-36 +374-257- 203-50
« 26 » « 02 » 2021թ. N 18

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի

ՏՆՕՐԵՆ Է. ՓՈԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փոթոյան

Համաձայն «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման համար 2021 թվականի փետրվարի 12-ին կնքված N «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) N 1 հավելվածի և Պայմանագրի 2.4 կետի ենթակետերով նախատեսված կարգի «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն պարտավոր է մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքներ՝ պահանջի դեպքում տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր և հավաստագրեր, սակայն «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված 3, 9, 15, 18, 19, 24 և 27-րդ չափաբաժինների մասով դեղորայքի տեխնիկական բնութագրերում, արտադրողի անվանումներում առկա են անհամապատասխանություններ պայմանագրի N 1 հավելվածի նկատմամբ, ինչպես նաև բացակայում է չգրանցված դեղորայքի մասով ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրամադրված ներմուծման հավաստագիրը՝ համաձայն ՀՀ Կառավարության 2020թ. դեկտեմբերի 3-ի N 1933-Ն որոշման:

Հետևաբար, Պայամանգրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 3, 9, 15, 18, 19, 24 և 27-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերության պահանջները՝ «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ն 2021 թվականի փետրվարի 24-ից միակողմանի մասնակի լուծում է 2021 թվականի փետրվարի 12-ին կնքված N «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 6617.9 (վեց հազար վեց հարյուր տասնյոթ դրամ և 9 լումա) ՀՀ դրամ, որպես տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ընկերությունից կգանձվի նաև որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 1 323 580 (մեկ միլիոն երեք հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով և 132 358 (մեկ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր հիսունութ) ՀՀ դրամի չափով:

«Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Հակոբյան